



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Университет
Гимназия Кембридж

1902

891.99

U-47

ԲՅՈՒՆ



ՅՈՒՆ ԺԱՄԲԱՆ

ԱՍՏԻՍՏԱՆՈՒՄ

ԱՐԵՎԱԾԱՆԵՐԸ

ՃԱԿՍԱՍՄԱՐՏԸ

ՀԱՆԳՐՈՒՄԸ ԵՒ

ՎԱՆՈՐԿԱՆԻՆ

ՍԱԾՄԱՆՈՒՄ

Փ Մ Ք Ի Զ

1902

Այնքան արշարյակեր կան որ սակարին
յեւն ծագած... (Ռիկ-Էիսս) 1/2 հմ.

12 MAR 2011

891.99
U-47
ԱՏՈՒ Ե ԱՐՃԱՆԵԱՆ

ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԻՆ ԱՆՏԻՊ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Արիւնի Իրիկուններ (Քերթուած)

Ընտանիքը

Ցորենիկե Դաշտերը

Խեղճութիւնը

Եռաբանութիւն
(արձակ)

1001
3708

ԴԻՊԼՈՄԱՆԻՆ

Հ Ա Յ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ
ՀԱՄԱՐ



Փարիզ — 1902

30 JUL 2013

54951

ՅՈՅՍԻՆ ՃԱՄԲԱՆ

ՈՒ ԱՆՈՆՔ, հսկայածեւ ոսկւիրաները
 մարմարեղէն Յոյսին,
 Ըմբոստացումներու ապառաժներէն իրենց ճա-
 կատներն արիւնած,
 Բայց աչուրներնէն անասելի արհաւիրք մը
 արձակելով
 Ու իրենց փշրող աղօտներուն տակ հրաշէկ դա-
 նակներ արորեղէն՝
 Աւերակներու քառուղիի մը վրայ, այս իրիկուն
 Տժգունութեանս հետ երես երեսի, ինծի ըսին .

«Ո՛վ դուն որ քու մատուրներովդ աչուրներդ
 փորեր՝

Այս ընդվզումի ու խօլ երիվարումներու պահուն
 վճռական փոթորկումներուն անտարբեր՝
 Այսպէս շրթունքներդդ դէպի Յաւը կարկառած՝
 Ու բազուկներդ, պաղատանքի մէջ, յոգնածօ-
 րէն դէպի վեր,
 Առաւօտէ առաւօտ ու իրիկուրնէ իրիկուն,
 Անշա՛րժ, մեզի համար զոհուածներուն վրայ,
 եղբօր մը պէս, բայց վայրապար՝
 Քու վէրք դարձած նայուածքներուդ բոլոր
 արիւնը տուիր . . .

«Օ՛ նախ քու փորուած բիբերդ անհուն,
 Մեր պաշտամունքի ջահերուն դարձո՛ւր,
 Ու մտածումովդ մեզի ունկնդրէ,
 Գիտենք որ դուն երազող մըն ես ու այլուր-
 ներէն սթափեցար,
 Ոգեվարներու աղերսող հոնդիւններէն հրա-
 ւիրուած,
 Ու իրենց քարուքանդ մարմիններուն զալա-
 րանքէն սարսափահար,
 Անոնց վրայ քու երգերուդ թագմանական հան-

գիտաին հետ,
Ձեռուըններուդ հանգչեցնող շարժումները տա-
րածելու . . . :

«Բայց նուիրական Ցաւը ինքն իր մէջը ձգէ՛,
Ո՛վ դուն, ողջակիզումներու ուխտուած սպի-
տա՛կ տղայ,
Երբե՛ք պէտք չէ խաղաղութիւնը խուովել ին-
կածներուն
Եթէ՛ նոյն իսկ նայուածքներուդ արիւնին աղ-
բիւրներովն ալ ըլլայ :

Ու դուն մտածումովդ այսուհետեւ, յաւերժապէս
Փառքերու ճակատադրին սահմանուած
Աստուածային մարմարներու զանգուածներէն՝
Ինչ Ձեւերուդ խենթութեանը համեմատ,
Եթէ՛ կ'ուզես, Տառապանքը, դարերուն համար,
քանդակէ՛ .
Բայց, մի՛ մոռնար, Անոր աչուըներն ու բե-
րանը ու հոգին, տարիօրէն,

Ընդլզումի ստինքներուն կարկառելու . . . :

«Ու յետոյ ու մանաւանդ ըլլալու համար Ան՝
որ պէտք է ըլլալ վերջապէս,
Այս մաքառումի ու ակնկալութեան օրերուն,
Ամբողջ երկիրը, ստուերիդ մէջէն, հոգիիդ հետ,
առանձին,
Հորիզոնէ հորիզոն քալէ՛ դուն,
Աւաններէն, ու դաշտերէն, ու արտերէն ան-
ծայրածիր,
Դէպի քաղաքներն, ու գիւղերն, ու հնձաններն
հեռաւոր .
Ու քայլիդ վրայ անխոնջօրէն նորէն վերա-
դարձիր,
Եւ մոլեգնաբար Մահը հոտոտէ՛,
Դիտե՛ս որ պէտք է բաղխուիլ անկէ,
Բանալու համար մեծ ճամբաները Յոյսին,
Որպէսզի, վերջապէս, Երազին ձիերը փոթոր-
կանման
Մեր կամքին ձեռուըններէն դիցազնաբար վար-
ուելէն՝

Յաղթանակին կատարները արձանանան

«Ու վայրկեան մը մթաստուերին մէջէն,
Եթէ կրնաս, անհունօրէն ետիդ դարձիր,
Ու տես մեռելներուն հողէն ժայթքումն յան-
կարծական

Որ գերեզմաններուն ու քանդուած քաղաքնե-
րուն տակէն,

Մէկէն ի մէկ փրկութեան ոգումներէն շնչա-
ւորուած՝

Մեր ետեւէն, այս իրիկուն, տենդոտօրէն
ոտքի՝

Դէպի Յոյսին բացաստանները պիտի քալեն :

Ու անոնց հաւատքին հրայրքը նայէ՛ ու սիրտ
ա՛ռ,

Տե՛ս իրենց ծանր քարերն ու սև խաչերը
փայտէ

Հողէն յոգնած ուսերնուն վրայ,

Տե՛ս իրենց պատանքներն իրարու արիւնէ
կարմիր՝

Խաւարներու հովերուն տարածած,

Ու տե՛ս, տե՛ս, բոլորն ալ մէկ մէկու առջեւ
կարծես թէ ծնրագիր, տե՛ս,
Իրարու համար անգամ մըն ալ մեռնելու եր-
զումները կ'ընեն . . . :

«Ու ամենքն ալ հոն պիտի ըլլան, այսօր,
մեզի հետ,

Անոնք որ կոյր են ու անոնք որ անկար,

Ու անոնք որ իրենց վիզերը խելայեղօրէն

Մէկ մէկու հողիի համար

Դէպի Եղեռնը երկարեցին . . . :

Ու անոնք ալ որ մեր վարպետներն եղան ընդ-
վզումի,

Որոնց խօսքերը մեր խօսքերն են, այս իրիկուն,

Ու իրենց հողին մեր պաշտամունքը առ յաւէտ :

Ու տակաւին ամբոխը կայ անոնց՝ որոնց սար-
սափին աղէկ որ չընդհարեցար դուն,

Միայն մենք գիտենք թէ անոնց մարմինները
ո՛րչափ ամեհի են,

Ու իրենց աչուըններն ու շարժումները ո՛րչափ
անարկու

Ու այն արիւնը որ եղբայրներու գլխատումէն
իրենց մաքովը ըմպեցին

Օ՛, անոնց գանկերուն մէջը՝ յաղթանակներու
ծարաւէն գինով արծիւներու

Սնտահման թեւարազխումները բացաւ . . . :

«Ու դեռ մայրերը կան, արգասաբեր ու հերար-
ձակ,

Որ վերը, վրաններուն մէջը դաշտավայրին,
իրենց յուռթի ու լայն ու լուսաւոր կողերուն
տակ,

Մեր վաղորդայնները նորէն փառաւորելու հա-
մար

«Մոլեգին Դիւցազններու կարմիր երկունքը կ'ապ-
րին . . . :

«Բայց հիմա որ առաւօտը պայծառօրէն մօտե-
ցաւ,

Ու դուն մեր հոգիները ձանչցար,

Ո՛վ երազելէն ոգեվարող եղբայր,

Եկո՛ւր, որպէսզի մեր շրթունքները քու շըր-
թունքներդ ընդունին

Վայրկեանի մը ու յաւիտենականութեան մը
համար . . . :

Ու դեռ Արիւնին նուիրական պղծումէն չկար-
մըրած՝

Սա՛ փայլակէ սուրը կտրիծօրէն ձեռքդ ա՛ռ,

Ու անով մեր ամենուն սուրերը սա՛ աստղերուն
մաքրութեանը տակ,

Երգումներուն Երգումը ընելէն խաչաձեւէ՛ . . .

Ու գէթ անգամի մը համար՝ ինքնիրմէդ դուրս
դահալիժելէն՝

Եթէ կրնաս, մեզի հետ քալէ : Սհաւասի՛կ
ձամբան :»

ԱՍՏՈՒԱԾԱՅՈՒՄԸ

Բ

ԸՄՐՈՍԱՅՈՂՆԵՐՈՒ ամբոխը երբ առաւօ-
տին մէջէն խելայեղօրէն կը յառաջանար,
Դէպի բաղխումները նորանոր ու նպատակը
սրբազան,

Տեղափոխուող անտառներու զարհուրանքը տա-
րածելէն՝

- Օ Ու նուաճելով հորիզոնները սարսափահար,
- Շ Յանկարծ երկու Ձեւեր, դաժանօրէն սպառազէն,
- Չ Իրենց սուրբերը արեգակին՝ ու ծանրագէժ՝ մեղի
ըսին .

«Եղբայրնե՛ր, այսօր օրերուն Օրն է, ու գի-
տենք որ պատրաստ էք դուք Արհաւիրքին,
Բայց մեր երկաթէ դատտակներն անոր կուրծքին
աղեղելէ առաջ,



Սա՛ կործանուած տաճարին խաչքարերուն վրայ,
Հոն ուր Անոնց ոսկերտտին կը յաւերժանայ,
Փառքերու աստուածացումին ունկնդրեցէ՛ք
Ձոր մեր ձայները ձեզի համար՝ ու անոնց հո-
գիին՝ պիտի երգեն :

«Ո՛վ քուք որ ձեր գարուններն, ձեր արշա-
լոյսներն ու հոգիներն անհուն՝

Մեր ամենուն փրկութեանը համար

Ա՛յնչափ դիւցազնօրէն արիւնելու շտապեցիք,
Ու անցաք Իտէալին գազաթներէն, ազատարար
խոյանքներով,

Մտածումնիդ ու աչուընիդ անընկճելի Յոյսին
կարկառած,

Բոլոր մեր ցաւը ու բոլոր քայքայումը մեր սեւ
օրերուն

Ձեր ներսիդին մոլեգնաբար տառապելէն . . .

Ու ձեր նայուածքին ու հաւատքին փայլակները
գերբնական,

Ազատութեան նորածին՝ որբի մեր խեղճ աչքերը
լուսաւորելէն՝

Հոս, մեր ամենուն հոգիին մէջ, ձեր պատգամ-
ները քանդակեցին . . . :

«Անձնուրացումի ու աղամանդէ փառքի այդ
օրերէն ի վեր,

Սա չորս կողմի լեռնաշղթաները բոլոր,
Իրենց ճակատներուն վրայ քանդուող մրրիկնե-
րուն պէս,

Ձեր անունները ահագին՝

Դողահար կողերնուն խորը կ'ապրին . . .

Դո՛ւք, այլեւս անմահօրէն՝ ԺԻՐԱՅՐ, ու ՊԵՏՕ ու
ՓԱՐԵԱՆ կ'աղաղակուեք,

Ու ԳՆՈՒՆԻ, ու ԱՐԱՄԵԱՆ, ու ՍԵՐՈՒ, ու
ԴԵԻԵԱՆ . . .

Դուք էիք որ կործանումի ու փրկութեան ճըգ-
նաժամերուն

Շղթայազերծումներու ահազանգերը հնչեցուցիք
Պատնէչներէն պատնէչները ու, անեղապէս, աշ-
տարակէ աշտարակ

Ու բանտերէն, բերդերէն ու թիարաններէն անդին
Դէպի քաղաքները Ստրկութեան . . .

«Ու երբ, գիշեր մը, անձնազոհումներու եղե-
րական ժամը վրանիդ ինկաւ,
Դո՛ւք, ազատութեան ձանապարհները մեզի հա-
մար հարթելէ յետոյ,
Ձեր ձեռուըններովը, աւա՛ղ, մեր անկարեկիւր
նայուածքներուն գիմաց՝
Ձեր վաղուան խարոյկները պատրաստեցիք . . .

«Ուրեմն փա՛ռք եւ օրհնութի՛ւն ձեզի,
Դուք մեր կուռքերը մարմարեզէն ու մեր Սուր-
բերը պայծառ,
Դո՛ւք՝ Հսկանե՛րը. դո՛ւք՝ Առաքեալնե՛րը,
դո՛ւք՝ Ահաւորնե՛րը բոլոր,
Փա՛ռք եւ օրհնութի՛ւն ձեզի .
Հոս, ձեր հողին առջեւը ծնրագիր ու աչքերն իս
աղօթքով լեցուն ,
Ձեր պատանքները մտքերնուս մէջ երկիւղածօ-
րէն քակելէն՝
Թոյլ տուէ՛ք որ՝ մեր բերանները ձեր գիւցազնի
գանկերուն՝
Ընդունինք ձեր կմախքները մեր ուխտուածի

իրաններուն վրայ,
Ու ձեզի խնկե՛նք աչուընուս մէջի վրէժէն սա-
ռած արիւնը ծաւին ,
Որպէսզի երբ յամառօրէն շարունակենք յոռա-
ջանալ
Ձեր մահերուն յաճախանքը ալ չի կտուչի մեր
քայլերուն . . .

«Փա՛ռք եւ օրհնութի՛ւն ձեզի, նորէն ու նորէն,
Ու հիմա կը բաժնուինք ձեզմէ՝ աւետելէն
Թէ ձեր բազուկները ձեր ընդվզումի զաւկընե-
րուն բազուկներն են այսուհետեւ,
Ու ձեր հաւատքը մոլեգնութիւնն է անոնց՝
Որ մոխրակոյտերու ու դիակի մինչեւ աստղերը
բրգաւորումներէն խելայեղած ,
Սա՛ չորս կողմի բոլոր առապարներէն , բլուր-
ներէն ու ապառաժներէն վեր ,
Ձեր աստուածացումը օրհներգելով փոթորկոտօ-
րէն պիտի երիվարին , ահաւասի՛կ ,
Ո՛վ գիտէ, դէպի ո՛ր յաղթանակները կամ դէպի
ո՛ր պարտութիւնները փառաւոր . . . »

ԱՐՇԱԼՈՅՄՆԵՐԸ

uu *uacj*

Գ

Ու արհաւիրքով լեցուն Մեռելները այն
ապառաժուա բլուրներուն տակէն ,
Որոնց վրայ ըմբոստացումի մեր կարաւանը կը
լեռնաւորուէր ,
Յանկարծ իրենց մերկ բազուկները դէպի մեզի
տարածելէն ,
Նորէն կեանքը վերագտածի իրենց երգերը ցնո-
րաբեր ,
Ամէնքը մէկ , անշարժ ու երկիւղած ու գիշե-
րախառնօրէն մղձաւանջային ,
Տարօրինակ երջանկութիւնով մը երգեցին . . . :

«Օ՛, կա՛նգ առէք ձեր վերելքին վրայ ո՛վ
դիւցազունները վաղուան ,

Ու մտիկ ըրէ՛ք անոնց որոնք փառքի օր մը
մահը անարգեցին

Ձեզի ու մեր ամենուն համար...

Մենք, մեռելներս, ձեզի հետ ենք այս առաւօտ,
Այլեւս մեր բազուկի ոսկորներուն ճարճատիւն-
ները, գիտե՛նք, դիւային,

Սրունքներնուս երկայնքն ի վար ու ձեր ա-
կանջին,

Մահադուժօրէն պիտի չի հնչեն...:

Քանզի, մեր կմախքները՝ ալ դադաղներէն ու
աւերակներէն դուրս,

Սա՛ ծաղիկներուն նման, վերէն յորդող լոյսե-
րուն տակ,

Օ՛, աւետի՛ս ձեզի, ալ կըսկսին պայծառօրէն
մաւորուիլ...:

« Ու նորէն մեր այսչափ ատեն,

Խաւարով ու հողով ու յուսահատութիւնով լեփ-
լեցուն

Կոպերնուս տակը, այս պահուն,

Մեր նայուածքները լիճերու նման կը բացուին :

Ու մեր խեղճ շրթունքները մահէն տրորուած,
Օ՛, գթացե՛ք, մայրականօրէն, ձեր հրավառ
ճակատներուն պէտք ունին...:

« Մեր գերեզմանի քարերն ու խաչերն արիւն-
լուայ,

Որոնք մեր մահը ու այս կեանքը մեզի հետ
ապրեցան,

Սպասեցէք որ ձեր դիւցազնի գլուխներն անոնց
վրայ

Գէթ վայրկեան մը զարհուրանքէն իրենց խոն-
ջէնքը հանգչեցնեն...:

« Նորէն կ'ըսենք, մենք անոնք ենք որոնք
օր մը փրկանքի

Իրենց կեանքը ձեզի համար Եղեռնին առին...
Ու անոնք դարձեալ որոնց դուք ձեր այսօրուան
երգերովն ամենի,

Աւերակներու ծանրութեանը տակ ուր ցաւին
հետ վատարար կը կըքէինք,

Ձեր արարչագործ շունչովը մեզի կեանքը
սոււիք :

« Ուրեմն ձեր երգերը մեր երգերը թո՛ղ ըլլան ,
Բայց թո՛ղ սուէք որ ձեր ամէն մէկուն պատ-
եանէն մերկացած սուրը պողպատէ
Սա՛ մեր քարուտ , ու դաժան , ու մութ ու
անողորմ ճամբան ,
Ծիածանի մը հանդոյն մինչեւ նպատակը լու-
սաւորէ »

Ու ես բլուրներուն վերէն ու դաշտավայրին
վրայ ,
Մասանմանօրէն ոտքի՛ , ինչպէս աշտարակ մը
կռանիդէ ,
Տեսայ որ , բիւրաւո՛ր ու բիւրաւո՛ր ծննդաբեր
մայրերը սեւահեր
Իրենց նորածին զաւակները ձեռքերնուն մէջ ու
խելայեղօրէն դէպի վե՛ր
Արիւնտտած հորիզոններուն ամբարցուցին ,

Ձանոնք առաւօտին ճառագայթներուն խորը
մխրճելով ,
Յաւիտենականօրէն մկրտելու համար . . . :

Ու բոլորը մէկ իրենց ջինջ ու ծանր ու լուսա-
ւոր ձայնովը երգեցին . . .

« Ո՛վ դո՛ւք որ մեր մարմարէ կողերուն մայ-
րութենէն ստեղծուեցաք ,
Ձեր կեանքին առջեւ փակ աչուրները սա լոյ-
սերովը ոռոգելէն՝
✓ Խմեցէ՛ք նախ այդ արիւնէն որ արիւնն է ձեր
փառաւոր հայրերուն ,
Ու յետոյ ամէն օր մեր առոյգ ստինգներուն
կաթը աստուածային
Ձեր ամէն մէկը պիտի ընէ այնպէս ինչպէս որ
ձեր հայրերը մեզի համար
Սա դաշտերուն մէջը անձնուրացօրէն եղան . . . :
Ուրեմն Ուլսաննա՛յ ձեզի , դո՛ւք՝ մեր միսը , ու
դո՛ւք՝ մեր հոգին ,

Ու Ուսանանա՛յ անոնց որոնք ձեզի մեր մէջը
փառքի օր մը կերտեցին . . . »

Երգերը դադրեցան, մինչդեռ յանկարծ՝ յայտ-
նուեցաւ որ,
Անդին, անծայրածիր ու հեռաւոր արտերուն
վրայ,
Բոլոր երիտասարդ ու լայն ու հուժկու հերկու-
ները մեր վազնջական հողերուն,
Իրենց խելայեղ եզները երկաթներուն լծած, ու
յամառօրէն,
Աղամանդէ ու յակինթէ արգասաւոր Արշալոյս-
ները կարօրեն . . . :

ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Մ Ա Ր Մ Ա Ր Ւ ո՞ր ասպառածներէն արդեօք
իրենց իրանները կառուցին...

Ու ո՞ր գինիէն, ո՞ր թոյնէն եւ կամ ո՞ր արիւ-
նէն հրավառ,

Այսպէս իրենց աչուըներն ու մտածումը սա՛
կենթութեանը յանգեցան...

Ո՞ր սալերուն վրայ ու ի՛նչ կռաններով այս
արշաւանքի գիշերուանը համար,

Իրենց սա՛ կայծակէ սուրերը կըցան այսչափ
տիրականօրէն դարբնելու...

Ու վերջապէս, ըսէ՛ք, ո՞ր խաւարներուն վը-
րայէն է որ նուաճելով սանձեցին,

Այս բիւրաւոր երկաթէ երիվարներն ահար-
կու...:

Ու հորիզոններուն ու հողերուն բոլոր գօտիներէն,

Այսպէս, վայրագօրէն ու քինայոյզօրէն ու յաղ-
թականօրէն,

Եկա՛ն, եկա՛ն, եկա՛ն, Անոնք, իրենց դոռոյ-
թովը գփխային

Սասանելէն դաշտավայրը ուր մենք բոլորս ա-
ռաւօտին լոյսերէն գինով,

Վճռական օրուանը համար՝ որ «Օրերուն Օրն է»
ըսին,

Իրենց խառնուեցանք դեռ աւելի զանգուածաւո-
րելու համար այդ Փոթորիկն ապերասան,

Որուն անողոք ճամբան, արդէն մեր ամենուն
ալ ճամբան էր...:

Ու երբ լուսինը եղերականօրէն դէպի երկինք
կ'ամբառնար,

Խաւարներուն անդունդները իր հրդհներն ան-
տառելէն՝

Յանկարձ՝ հորիզոնին վրայ, Ուրուական մը,
թերեւս արքայ մը՝ մեր հին փառքի օրերէն

Որ հողէն յառնած ըլլալու տարօրինակ երեւոյ-
թըն ունէր,

Իր խոյրը ձեռքը՝ զրահը արեգակի նման կուրծքին՝
Ու իր վահանը ամբոխին դիմացը բռնելէն,
Կոյր աստուածի մը հանգիստաւորութեանը հա-
մեմատ, ծանրագէմ, ըսաւ .

« Զաւակնե՛ր, նախ սպասեցէք որ սա՛ աչուընե-
րուս մէջէն, դարերէ ի վեր,
Գերեզմաններէն լեցուած դեղին հողը վար թա-
փելէն, ձեզի խօսիմ . . . »

« Ու ահաւասի՛կ, ձեր հոգիները կը ճանչնամ
ձեր ճակատներուն բոցէն,

Ու ցեղիս արիւնին ձեր մէջ եռալը երջանկօրէն
մտիկ ըրի . . . »

Դիտեմ ձեր Յաւը որուն մոլեգին ծնունդն է ձեր
ըմբոստացումն այսօրուան . . . »

Իմացայ, գլուխս ձեռքերուս մէջ ու դադաղիս
տախտակներուն արմնկած,

Իմացայ բոլոր ճիւղերն ու հծծիւններն Անմեղնե-
րու անագորոյն կոտորածին . . . »

Ու սերունդներու սրտերէն հոսած արիւնը կրակէ,
Աւա՛ղ, հողին մէջէն սուզուելով իջա՛ւ, եկա՛ւ,

իմ խեղճ ճակատըս թրջելու . . . »

« Բայց արշաւելէ առաջ, նախ՝ հորիզոններուն
առագաստեցէ՛ք

Սա՛ դրօշը՝ որ Դրօշը եղաւ ձեր հայրերու Յաղ-
թանակին,

Ու ձեր քայլերը շտապելու եւ հոգինիդ դեռ
փոթորկելու համար,

Պայծառափողիս ունկնդրեցէ՛ք որ շունչիս մէջէն
մեր վրէժը պիտի հնչէ . . . »

Ուրեմն, Յառա՛ջ, Յառա՛ջ, ո՛վ Ըմբոստացումի
զաւկըներըս արիւնկզակ,

Ես դիտեմ որ կեանքին հանգիստն ու խաղա-
ղութիւնը այս երկնքին տակ,

Ձեր Յաղթանակէն վերադարձին ցնծութիւնով
պիտի երգէք . . . »

Ու հրեղէն Անցեալին տեսիլքն իր ոսկեկուռ
պատանքը ուսին,

Հորիզոնին մէջէն հանդարտօրէն անյայտացաւ ,
Մինչդեռ գերազոյն Խոռովքին փողերը հնչեցին ,
Ու ձիերը մեր երկաթէ ազգերըուն տակը ծա-
ռացան .

..... Ու գունդերը բաղխուելէն՝ Վրէժին ու
Եղեռնին ,

Մարմին մարմինի ընդխառնուումը փոթորկեցաւ :

Օ՛, այն ընդհարումները , ալ օրերով , մէկմէկու
վրայ փլչող իրաններու . . .

Ու պաղատանքներն ու գալարումները զոր մեր
կրակներն անոնցմէ կը կորզէին ,

Ու դեռ անպատում ճարճատումը յօշոտուող
լանջքերուն . . .

Ու ազնաներուն բազմութիւնը սեւ անտառի մը
այնչափ նման ,

Որ յարատեւ՝ իրիկուընէ իրիկուն՝

Մեր սուրերէն ինկած դիակներուն վրայ ծան-
րօրէն կը տապալուէր . . . :

Ու գիշեր մը , արիւնըռուշտ կատաղանքի ու

մոլուցքի գիշեր ,
Ուր ամէն դի արիւնին աղատարար սահանքները
մեր ձեռքերովը պեղուեցան . . .

Քանի մը վիրաւոր ընկերներ ,
Իրենց հերոսի փառաւոր պարտութիւնէն ամօ-
թահար ,

Մեր բոլորին առջեւ , սարսափին տակ ու թըշ-
նամիին դիմաց

Նորէն գիւցա՛ղնօրէն մեռնելու համար ,
Քանդուած մարմիններն դէպի մեզ գալարած՝
Յաղթանակի՛ն , Յաղթանակի՛ն , Յաղթանակի՛ն . . .

Մոլեգնաբար որոտալէն ,
Իրենց պողպատէ սուրերը ակռաներնուն տակ
փշրելով փայլակներու նման լափեցին :

Այսպէս մեր արհաւիրքի ամբօխները կամքի զօ-
րաւորներուն ,
Պղինձէ ու կապարէ աննուաճելի Դուռներն
եղան ,

Որոնց դիմաց Եղեռնը իր մարմինը բաղխելէն
պարտասած՝

Օր մը վախճանական անկումի չարաշուք օր,
Իր ձեռուընկերոջն իր ոսկրակոյտերը քաղաք-
ներու նման,
Մեր փառքի պատուանդանին տակը ահաւոր,
Գերիաբար ծունկի եկած՝ կնդրուկի տեղ հըր-
կիզեց . . . :

Ու շառագոյն առաւօտի մը ընդմէջէն,
Մեր կարմիր քղամիզներոջն անհունօրէն փաթ-
թուած,
Բոլորովին յամրաբար ու կապարագոյն, ռազ-
մադաշտը նկատելու համար՝
Մեր խօլական երիվարներն թշնամիին բեկոր-
ներուն վրայ,
Փոթորկոտօրէն ու քառարչաւ բոլորը մէկ ար-
ձակելէ յետոյ . . .
Դարաւանդի մը գագաթը բարձրացանք,
Տարփօրէն, մեր ոընգունքները Աղատութեան
հորիզոնին յանձնած,
Ալ վերջապէս Եղեռնին ծովատարած տաք արիւ-
նը հոտոտելու . . . :

ՀԱՆԳՐՈՒԱՆԸ

ԵՒ

ՎԱՂՈՐԴԱՅՆԻՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

ՎԲ ԱՅՑ մէկը, դարաւանդին վրայ, իր արիւն-
 թաթաւ քղամիգը հովուէն
 Ու գիտախօսիւ ջահին բոցովը մեռելակոյտերը
 լուսաւորելէն,
 Իր կերպարանքը դէպի ամբոխը՝ տիրաբար
 ըսաւ .

«Նղբայրնե՛ր, թէեւ գիտեմ որ ձեր անձնուէրի
 ճակատներն այս պահուէն

Պաւարներէն նոր ծնանող սա՛ արշալոյսին դի-
 մաց,
 Յաղթանակին հուրերովը կ'աղամանդուին . . . ,
 Թէեւ գիտեմ որ ձեր վրէժխնդիր աչուընները
 տակաւին
 Ծովատարած Արիւնին նկատումէն դեռ չար-
 բեցան,
 Բայց այսօր Հանգրուանին վրայ, մեր մայ-
 րերուն գիրկը ժամանելէ առաջ,
 Եկէ՛ք, նախ մեր ուսերուն արիւնտաած վերար-
 կուներովը հրավառ,
 Այս փառքերու Փառքին գագաթէն, ու անմիջա-
 պէս,
 Գանկերու, բաղրակի ու արորուած իրաններու
 Օ՛ր, գթութիւն հայցող սա փլատակները պա-
 տանքենք .
 Ու հողին ընդերքը յաղթանակին լուրովը լու-
 սաւորելու համար
 Բոլորդ մէկ ձեր սուրերուն կրակը անոր խորքը
 մխրճելէն՝
 Թաղեցէ՛ք զանոնք անոր մէջ ուրիշ մեղի մեր
 յաղթանակը բերին . . . :

Ու յետոյ, վերջապէս, ինծի հետեւեցէք դէպի
քառութիւնը սա՛ մըրկոտ ջուրին՝

Որ աւա՛ղ, մեր հայրերուն զիականերովը բեռնա-
ւորուած,

Իր արհաւիրքէն զանոնք այնչափ ատեն սա ա-
պառաժներուն դիմացը կը փշրէր . . .

Եկէ՛ք ձեր արիւնոտ դաստակներն հուժկու,

Իմ արիւնոտ դաստակներուս հետ,

Անոր սրբագործող ալիքներուն մէջը մաքրելու,

Քանզի, այն Իտէալը՝ զոր մեր երիտասարդի
մտածումը պայծառ

Մեր դարաւոր Հողին համար սրբօրէն քանդակեց

Երբե՛ք, եւ ճշմարիտ կըսեմ ձեզի,

Այլեւս ո՛չ յաղթանակներու ազատարեր սու-
րերուն,

Ու ո՛չ ալ արիւնին ահագնութեանը պէտք
ունի : »

Իր խօսքերը աւարտեցան, մինչդեռ,

Առտուան հովին թեւերուն հետ որ ոգեվար-
ները կը սարսէր,

✓ Գիշախանց անգղերու փոթորկի մը այնչա՛փ
նման,

Մեր արեգակէ վերարկուները իրենց անագորոյն
նախճիրին տակ,

✓ Բովանդակ ռազմադաշտը մեր նայուածքներէն
գիտպատեցին . . . :

Ու մեր ձեռքերէն խելայեղաբար արձակուած
սուրերը բիւրաւոր,

Հեռաւոր հողին վրայ շանթերու պէս յանկար-
ծօրէն խորասուզուեցան :

ԲԱՅԱՍՏԱՆՆԵՐՈՒ ընդմէջէն երբ ամբոխը
 դէպի հանգրուանը կ'ընթանար,
 Վճռական ու յամառ գնացքովը այն մարդերուն
 Որոնց ուղիին վրայ ուրիշ նոր ու մեծ Երազ-
 ներ իրենց թեւերը կը բանան...
 Յանկարծ՝ լայն ու արգաւանդ առաւօտի մը
 նման՝ մեր մայրերուն ծագումը յայանուեցաւ
 Որոնք սնուցանող կուրծքերնին իրենց քողե-
 րէն մերկացուցած՝
 Արմաւենիի ստաբրով բեռնաւոր, ճակատներնուս
 համար,
 Մեր սպասումէն դինով ու մեր կարօտէն արբ-
 շիւ, երգեցին .

«Չաւակնե՛ր, նախ մեղի մօտեցէք, վասնզի
 դիտենք որ,
 Չեր յոգնած ու խռովեալ ու իմաստուն
 Ճակատներն ազատաբեր հերոսի,
 Այլեւս հիմա մեր մայրական լուսեղէն ծո-
 ցերուն ,
 Հանգչեցնող քաղցրութեանցը պէտք ունին ...»

«Ու ահա՛ւասիկ շուշաններն անբասիր ,
 Չեր դեռ արիւնլուայ ոտուըներուն տակ,
 Արշալոյսին հետ, ձեր փառաւորութիւն համար ,
 Մեր մայրերու ձեռուըներոյն հնձուած ...

«Ու ահա՛ւասիկ արծաթեայ խնկամանները սըր-
 բազան
 Ինչպէս վաղնջական ու մաքրակրօն քրմուհիներ ,
 Այսպէս մեր անշա՛րժ ձեռուըներուն բարձունքէն,
 Թող ձեր յաղթողի կերպարանքներուն առջեւ՝
 Մեր պաշտամունքը արտաբուրեն ...

«Ու ահա՛ւասիկ մեր հինաւուրց հնձաններուն ,
Աստուածային ու անապակ գինին
Ձոր ձեր յագուրդին համեմատ ,
Այս տօնական ու ցնծութեան օրերուն
Մեր հողէ սափօրներէն պիտի ըմպէք . . .

«Ու ահա՛ւասիկ հոսանքը կրակէ արիւնին
Սեւ եւ հանդիսական ու աննուածելի ցուլերուն ,
Ձոր ձեր հայրերու հոգիին ու ձեր աստուածա-
ցումին համար ,
Անոնց գերեզմանաքարերուն վրայ , այս առա-
ւօտ ,
Մեր զօրաւոր ու սպիտակ ձեռուրները զոհե-
ցին . . .

«Ու ահա՛ւասիկ , ոսկիէ որաները աւետարանա-
կան ցորեանին . . .
Ու հեռուներէն արգասաւոր զաշտերուն տարա-
ծուումը անսահման ,
Ահա՛ւասիկ զարունէն բարձրացող հողին հոտը
կենսաբեր

Ու ահա՛ւասիկ նորէն լայն շարժումները սերմ-
նացաններուն . . . ,
Ու ահա՛ւասիկ հօտերուն տողանցումը բլուրնե-
րէն վեր ,
Ու ծաղիկներու ածուներ ձեր սպիտակ վրան-
ներուն համար . . . :

«Ու ահա՛ւասիկ վերջապէս ,
Մեր մայրական բազուկներն ու խօլ գլուխներն .
հերարձակ
Ու մեր շրթունքները հրակէզ
Որ ձեր այտերուն ու աչուրներուն այսչափ ա-
տենուան կարօտէն
Մինչեւ այսօր ցնորական գիրկընդխառնումներ
ու համբոյրներ երազեցին : »

Երգերը զագրեցան , եւ բոլոր փառաւոր մայ-
րերն իրենց զաւակներուն հետ ,
Սրբազան լեռներուն առջեւ ծնրադրած ու բա-
զուկներն դէպի վեր

Յաղթանակը տօնելէ առաջ, նախ ազատութեան
Հողին համար,
Իրենց պաշտամունքը մատուցին:

18 - 21 - 48
18
21
48
Հասցե
Սրբազան
Տիր շաք

ԱՌԱՌՈՏ մը նորէն, բոլորս մէկ մեկնե-
ցանք հանդրուանէն,
Մինչդե՛ռ մեր երիտասարդի երկաթէ ուսերը
կը լայննային...
Արդարութեան, Եղբայրութեան եւ Լոյսի
Կռանիդէ անվկանդ ու յաւիտենական Ոստան-
ներուն
Հիմնաքարերը անընկճելիօրէն կարենալ կրե-
լու համար....:

Այս
դերձը
տպագրուած
է Փարիզ «Համա-
լսարան»ի տպարանին մէջ,
չորս, Օոթօլան փողոց: Աւար-
տած է Հայոց թուականին,
ՏՅՂԴ, առաջին
ամսուան քսան
ևւ ութերորդ
օրը:

Եր - Եր - Եր - Եր
[Handwritten signature]

3-

13



8/15

9

« Ազգային գրադարան



NL0357705

54951

